Հարգելի դիմորդներ

Հայաստանի Հանրապետության բուհերի հեռակա ուսուցման ընդունելության համար պետք է ԳԹԿ **«dimord.am»** կայքում լրացնել դիմում-հայտ:

Դիմում-հայտը լրացնելու համար անհրաժեշտ է՝

ա) ունենալ ԳԹԿ անձնական համար

բ)ընդունելության յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար ԳԹԿ հաշվեհամարին (**900018003401**) փոխանցած **1500** դրամի անդորրագիրը:

ԳԹԿ անձնական համար տրամադրում է այն բուհը, որտեղ ցանկանում է ուսումը շարունակել դիմորդը կամ եթե դիմորդը մասնակցել է 2023 թվականի բուհերի առկա ընդունելության քննություններին, ապա կարող է օգտագործել այդ ժամանակահատվածում ԳԹԿ-ի կողմից տրված անձնական համարը:

Ընտրած մասնագիտությունների միասնական քննություններից դրական գնահատական(ներ) ունեցող դիմորդները կարող են մրցույթին ներկայացնել այդ գնահատական(ներ)ը կամ հանձնել նոր քննություններ: **Այս դեպքում մրցույթում կօգտագործվեն ավելի բարձր գնահատականները:**

Ընդունելության քննությունների վարձավճարից ազատվում են հեռակա ուսուցման ընդունելության կանոնների **41-43-րդ** կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները:

Հեռակա ուսուցման ընդունելության դիմում-հայտերի ընդունումը ավարտվում է **սեպտեմբերի 25-ին**, **ժամը 18:00**-ին: